

Տ. ՍԱՐԳԻՍ ՔՀՆՅ. ԱԳԹԱԻՈՒԳԵԱՆ

(2004-...) (1951-...)

Աւագանի անունով Աւետիս, անդրանիկ զաւակը Տ. Ղեւոնդ Ա. Քհնյ. եւ Երեցկին Պայծառ Ազգաւուզեաններու ծնած է Հալէպ, 1951 Մարտ 1-ին:

Նախակրթական ուսումը կը ստանայ ծննդավայրի Ազգ. Սահակեան վարժարանէն, իսկ Միջնակարգը եւ երկրորդականը՝ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանէն, գոր կ'աւարտէ 1970-ին:

1964-ին, դպրութեան չորս աստիճանները կը ստանայ Հալէպի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ՝ Ձեռամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ՝ լուսահոգի Տ. Ղեւոնդ Արք. Զէպէեանի: Իսկ Ուրարի տուչութիւնը՝ 1972-ին, Հալէպի Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ՝ Ձեռամբ Երջանկայիշատակ Խորէն Ա. Կաթողիկոսի:

Մինչեւ 1974, Հայաստան ընդունուիլը, չորս տարի ուսուցչական պաշտօն կը վարէ Ազգ. Սահակեան վարժարանէն ներս՝ դասաւանդելով թուարանութիւն, գիտութիւն, երգ եւ մարմնակրթութիւն:

1980-ին, պատուոյ յիշատակութեամբ կ'աւարտէ Երեւանի Փոլիթեքնիկական Ինստիտուտը եւ կը վկայուի որպէս Շիմարար Երկրաչափ՝ մասնագիտանալով մանապարհներու եւ կամուրջներու շինարարութեան երկրչափ մէջ:

1981-ի Յունուարին, գործով կը մեկնի Պաղտատ եւ ամբողջ տարին՝ մինչեւ շինարարական ծրագրի աւարտը կը մնայ այնտեղ: 1983-ի Հոկտեմբերին, կ'ընդունուի Քուէյթի Ազգ. Վարժարան՝ որպէս փոխ տնօրէն: Յաջորդ տարին իսկ, իրեն կը վստահուի Ճեմարանի Հայոց Պատմութեան դասաւանդութիւնը, որ կը շարունակուի մինչեւ 1990, Ծոցի Պատերազմը:

1986-ի Յուլիսի 5-ին, Հալէպի մէջ, Կ'ամուսնանայ Օրդ. Մակի Քէլէշեանին հետ եւ հետագային կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Սարգիս եւ Շողակ:

1991-ին, Քուէյթի ազատագրումէն ետք, նախկին տնօրէնին Հայաստան փոխադրուելով, կը նշանակուի տնօրէն վարժարանի զոյգ բաժիններուն, միաժամանակ դասաւանդելով Քաղաքացիական Կրթութիւն՝ աւարտական դասարանին:

1995-ին, կը ձեռնադրուի սարկաւազ՝ ձեռամբ Քուէյթի եւ Արաբական Ծոցի երկիրներու Թեմի Բարեջան Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Օշական Եպս. Զօլոյեանի (Այժմ՝ Առաջնորդ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին):

1999-ի ամառը ի հանդէսի ընթացքին, յետ ֆսանամեայ ուսումնական ծառայութեան, նախաձեռնութեամբ օրուան Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Եպս. Սարգիսեանի (Այժմ՝ Առաջնորդ Թեմիանի Հայոց Թեմին), կը պարգեւատրուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան »Ս. Մեսրոպ Մաշտոց« շքանշանով՝ Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Սրբատար Կոնդակով:

1999-ի աւարտին, բաւարար համարելով 16 տարի Քուէյթի մէջ իր կեցութիւնն ու ուսումնական ասպարէզը, կը հրաժարի պաշտօնէն՝ շարունակելու համար իր ծառայութիւնը Եկեղեցական քնազաւառին մէջ:

1999-ի Հոկտեմբերի 7-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ, Բարձրաշնորհ Տ. Օշական Արք. Զօլոյեանի տնօրինումով, կ'ընդունուի Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեվանք եւ երեք շաբաթ ետք, Հոկտեմբերի 31-ին, կը ձեռնադրուի ֆահանայ՝ վերանուանուելով Տ. Սարգիս, Ձեռամբ Լուսահոգի Տ. Զարեհ Արք. Ազնաւորեանի՝ օժակից ունենալով Տ. Արսէն Քհնյ. Գասապեանը: Տասներեք տարի առաջ, նոյն ինքն Զարեհ Սրբազան օրհնած էր Աւետիսի եւ Մակիի Ս. Պսակը:

Մինչեւ 2000-ի Սեպտեմբերը, մնալով Անթիլիասի Մայրավանքին մէջ, կը հետեւի Դպրեվանքի կարեւորագոյն դասընթացներուն եւ կը մասնակցի Մայր Տանարի ամենօրեայ ժամերգութիւններուն. իսկ Կիրակի օրերը, Ա. Պատարագ կը մատուցանէ Պէյրութի Ա. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ:

2000-ի Սեպտեմբեր 13-ին, ընտանեօք կը փոխադրուի Ամերիկայի Միացեալ Նահանգներ. երկու օր Նիւ Եորք մնալէ ետք, կը տեղափոխուի Ուաթըրթաուն, Մէտչուսէց, ուր երեք ու կէս ամիս փորձառական շրջան մը անցընելէ ետք, կը նշանակուի Ուստըր, Մէտչուսէցի Ա. Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հովի:

Իսկ 2004-ի Օգոստոսի 1-ին, Առաջնորդ Սրբազան Հօր կարգադրությամբ կը նշանակուի Ուաշինկթըն Տի Սի-ի Ա. Խաչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հովիւ, ուր կը ծառայէ մինչեւ այսօր:

Ձեռնադրութենէն հինգ տարի ետք, 2004-ին, կը ստանայ լանջախաչ կրելու իրաւունք, իսկ 2013-ին՝ ծաղկեայ փիլոն: